ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--- »----------2016թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 954-967-րդ հոդվածները, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 1214-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի և «Փարկինգ Սիթի Սերվիս» ու «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունների միջև 2016 թվականի նոյեմբերի 10-ին կնքված արձանագրությունը և «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության 100% բաժնեմասի սեփականատիրոջ 2016 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 14/12 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն Տիգրան Հարությունյանից ընդունել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունում վերջինիս սեփականության իրավունքով պատկանող 100% բաժնեմասը՝ 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով 100 (մեկ հարյուր) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունները մատուցող Երևանի ենթակայության «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնել «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ հավատարմագրային կառավարիչ).

2) Երևան համայնքի անունից հավատարմագրային կառավարչի հետ կնքել Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիր (այսուհետ նաև՝ պայմանագիր), մինչև տաս տարի գործողության ժամկետով, հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր:

3. Սահմանել պայմանագրի հետևյալ էական պայմանները.

ա. հավատարմագրային կառավարչի ամսական վարձատրության չափը՝ 7000000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Պայմանագրում նախատեսել նաև, որ. եթե ընթացիկ տարվա ընթացքում Երևանի համայնքի բյուջե մուտք եղած՝ ավտոկայանատեղի տուրքի և դրա չվճարման հետևանքով գանձված տուգանքի գումարի ընդհանուր համագումարը կգերազանցի 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը, ապա հավատարմագրային կառավարչին, որպես լրացուցիչ վարձատրություն, վճարման է

ենթակա 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարի 10 %-ի չափով գումար: Երևանի համայնքի բյուջե 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամից պակաս գումար մուտքագրված լինելու դեպքում հավատարմագրային կառավարիչը վճարում է տուգանք՝ հավաքագրված և 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի տարբերությունը կազմող գումարի 10%-ի չափով, որը հաշվանցվում է հավատարմագրային կառավարչին վճարման ենթակա վարձատրության գումարներից:

բ. առանց հավատարմագրային կառավարման հիմնադրի գրավոր համաձայնության Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը չօտարելու, գրավ չդնելու, վարձակալության չհանձնելու և փոխառություն չտրամադրելու մասին դրույթը:

3. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանել, որ հավատարմագրային կառավարիչն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան Ընկերության բաժնետոմսերով հավաստված հետևյալ իրավունքները.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.

ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ. ժողովի վարման կարգը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

գ. տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, ժողովների օրակարգի հաստատումը, ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

դ. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ե. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

զ. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

է. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ը. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

թ. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

ժ. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մոտ 2016 թվականի նոյեմբերի 2-ին կայացած խորհրդակցության ընթացքում արված առաջարկությանը համապատասխան Երևանի քաղաքապետարանը բանակցություններ է վարել «Փարկինգ Սիթի Սերվիս» ու «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունների կոնսորցիումի հետ՝ սեփականության ձևով պայմանավորված նրանց գործառույթները, այդ թվում՝ վճարովի ավտոկայանատեղերի տեղական տուրքի գանձման արդյունքում առաջացող ֆինանսական հոսքերի տնօրինումն ու կառավարումը համայնքային կառույցներին անցնելու խնդրի կապակցությամբ:

Բանակցությունների արդյունքներով Երևանի քաղաքապետարանի և «Փարկինգ Սիթի Սերվիս» ու «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունների միջև 2016 թվականի նոյոմբերի 11-ին կնքված արձանագրությամբ առաջարկվել է գործընթացի կարգավորման հետևյալ փոխհամաձայնեցված մեխանիզմը.

1. «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունը հեղինակավոր աուդիտորական կազմակերպության միջոցով գնահատում է իր կատարած ներդրումները, ակտիվներն ու պարտավորությունները, իսկ Երևան համայնքը, ավագանու համապատասխան որոշմամբ, որպես նվիրատվություն ձեռք է բերում ՓԲԸ-ի 100% բաժնեմասը՝ այն տրամաբանությամբ որպեսզի արդեն Երևանի ենթակայության անցած ընկերությունը ստանձնի ակտիվներին համարժեք փոխառու միջոցների մարման պարտավորությունը (ըստ ներկայացված տեղեկատվության՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության ակտիվների արժեքը կազմում է՝ 2.012.000.000 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 2.001.000.000 ՀՀ դրամ):

2. Երևանի քաղաքապետարանը փոխադարձ համաձայնությամբ վաղաժամկետ կլուծի իր ենթակայության «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության հետ կնքված «Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման» գնման պայմանագիրը:

3. Երևանի քաղաքապետարանը, հաշվի առնելով ներդրված սարքավորումների արդյունավետ շահագործման փորձ ունենալու հանգամանքը, Երևան քաղաքի ավագանու որոշմամբ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման կհանձնի «Լոկատոր» ՓԲԸ-ին:

4. Երևանի քաղաքապետարանը ՀՀ կառավարության համաձայնությամբ (որոշմամբ) առանց մրցույթի (բանակցային ընթացակարգով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու) մինչև 10 տարի ժամկետով կկնքի համապատասխան պայմանագրեր.

1) Երևանի ենթակայության «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի հետ՝ վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով՝ դրա համար անհրաժեշտ հաշվարկված և ամրագրված գումարի չափով՝ հստակ սահմանելով ծառայության մատուցման չափորոշիչները.

2) «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ՝ բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման ծառայության ձեռքբերման համար, ծառայության արժեքը սահմանելով վճարովի ավտոկայանատեղերից փաստացի գանձված տեղական տուրքերի և տուգանքների ընդհանուր հավաքագրված գումարի մինչև 10%-ի չափով: Պայմանագրով հստակ կսահմանվեն այն նվազագույն արդյունքները, որոնք պետք է ապահովի «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն, որի դիմաց «Լոկատոր» ՓԲԸ-ն կվարձատրվի ամրագրված գումարի չափով (հավաքագրում հանած

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ին վճարվող գումարի 10%-ի չափով), դրանից ավել հավաքագրման դեպքում՝ ավել հավաքագրված գումարի 10%-ի չափով, իսկ թերհավաքագրման դեպքում կսահմանվի թերհավաքագրված գումարի 10%-ի չափով տուգանք։

5. Երևան համայնքը 10 տարվա ընթացքում Երևան քաղաքի բյուջեից իր ենթակայության «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով կմարի ակտիվների ձեռք բերման համար վերցված փոխառությունների մասով ՓԲԸ-ի պարտավորությունները։

«Փարկինգ Սիթի Սերվիս» ու «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունների կոնսորցիումի հետ՝ սեփականության ձևով պայմանավորված նրանց գործառույթները համայնքային կառույցներին անցնելու խնդիրը հնարավոր էր կարգավորել միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունման դեպքում։

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 1214-Ա որոշմամբ թույլատրվել է Երևանի քաղաքապետին՝

1) երկկողմանի համաձայնությամբ ամբողջությամբ լուծել Երևանի քաղաքապետարանի և «Փարկինգ Սիթի Սերվիս» և «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունների կոնսորցիումի հետ 2013 թվականի ապրիլի 4-ին կնքված «Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման գնման» N ԵՔ-ՄԵԾՁԲ-12/2 պայմանագիրը.

2) ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերումն իրականացնել Երևանի ենթակայության կազմակերպությունից՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա՝ բանակցային ընթացակարգով, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով, պայմանագրի գործողության ժամկետը սահմանելով տաս տարի.

3) Երևան քաղաքի ավագանու՝ ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունները մատուցող կազմակերպության բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու թույլտվություն տալու մասին որոշման հիման վրա, հավատարմագրային կառարման ծառայությունների ձեռքբերումն իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա՝ բանակցային ընթացակարգով, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով, պայմանագրի գործողության ժամկետը սահմանելով մինչև տաս տարի ժամկետով:

«Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության միակ մասնակցի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 14/12 որոշմամբ իրեն սեփականության իրավունքով պատկանող ընկերության 100% բաժնեմասը նվիրվել է Երևանի համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերն ընդունելու մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը որպես նվիրատվություն ընդունելու և այդ բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը որպես նվիրատվություն ընդունելու և այդ բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ